Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 53 - Ա
որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑՄԱՆ ԿԱՆԽՄԱՆ (LDN) ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ԴԵԳՐԱԴԱՑՎԱԾ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի հողերի դեգրադացման կանխման նպատակների իրագործմանն ուղղված ազգային ջանքերին՝ դեգրադացված մարգագետինների կայուն կառավարման և վերականգնման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ, քաղ. Երևան, Արմենակյան 129, ՀՎՀՀ՝ 01573524 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սյունիքի և Լոռու մարզեր, շրջակա միջավայրի պահպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 804 561,2 հազար դրամ |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան և Լոռու մարզի Թումանյան խոշորացված համայնքներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2022 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև 2025 թվականի փետրվարի 11-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև 16.09.2022 թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում դեկտեմբերի 5-ից մինչև 2025 թվականի փետրվարի 11-ը ֆինանսավորվող 804 561,2 հազար դրամ, այդ թվում՝<br>1) ծառայությունների ձեռքբերում – 383 806,6 հազար դրամ.<br>2) աշխատանքների ձեռքբերում – 175 309,4 հազար դրամ.<br>3) ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) –192 388,9 հազար դրամ.<br>4) այլ ծախսեր – 826,2 հազար դրամ.<br>5) աշխատողների վարձատրություն- 52 230,1 հազար դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի ազատում) – 383 806,6 հազար դրամ, այդ թվում՝<br>ա. միջազգային փորձագետներ (2022-2025 թթ.) – 48 764,2 հազար դրամ,<br>բ. ազգային փորձագետներ (2022-2025 թթ.) – 112 238,3 հազար դրամ,<br>գ. թարգմանչական ծառայություններ (2022-2025 թթ.) – 3 627,1 հազար դրամ,<br>դ. ծրագրի տարածքում հողերի կայուն կառավարման և դեգրադացիայի ծախսերի գնահատում (2022-2025 թթ.) – 30 225,7 հազար դրամ,<br>ե. միջազգային և ազգային ուղևորություններ (2022-2025 թթ.) – 54 204,9 հազար դրամ,<br>զ. սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման ուղևորություններ (2022-2025 թթ.) – 12 090,3 հազար դրամ,<br>է. հիմնական որոշում կայացնողների և պրակտիկ աշխատողների համար հողերի դեգրադացիայի չեզոքացման վերաբերյալ կարողությունների զարգացման ազգային ծրագրի մշակում և իրականացում (2022-2025 թթ.) – 60 451,4 հազար դրամ,<br>ը. շահագրգիռ կողմերին, կանանց և երիտասարդներին ուղղված վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում՝ հողերի և արժեշղթաների կայուն կառավարման ուսուցման նպատակով (2022-2025 թթ.) – 38 689,0 հազար դրամ,<br>թ. մեկնարկային և ավարտական աշխատաժողովներ (2022-2025 թթ.) – 5 380,2 հազար դրամ, |

| | | |
|---|---|---|
| | | ժ. փոխայցելություններ՝ գիտելիքների տարածման, փոխանակման նպատակով (2022-2025 թթ.) – 18 135,5 հազար դրամ:<br>2) աշխատանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի ազատում) – 175 309,4 հազար դրամ, այդ թվում՝<br>ա. գիտելիքների բարձրացման նյութերի պատրաստում (հողերի դեգրադացիայի չեզոքացման ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ բուկլետներ և այլն) և հողերի դեգրադացիայի չեզոքացման վերաբերյալ լրատվական քարոզարշավի իրականացում (2022-2025թթ.) - 18 135,5 հազար դրամ,<br>բ. արժեշղթաների ներդրում (գովազդային վահանակներ, հերթափոխ արածեցման նպատակով արոտավայրերի սահմանազծում) - տեղեկատվություն և սահմանազատում (2022-2025 թթ.)- 31 434,8 հազար դրամ,<br>գ. հողերի կայուն կառավարման գործառույթների ներդրում (դեգրադացված մարգագետինների վերականգնում, ոռոգման ջրի խնայող տեխնոլոգիաների ներդրում, շուկայում մեծ պահանջարկ ունեցող հատապտղային և բանջարային մշակաբույսերի ներդրում) (2022-2025թթ.) – 125 739,1 հազար դրամ:<br>3) ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) – 192 388,9 հազար դրամ, այդ թվում՝<br>ա. Սերմեր, պարարտանյութեր և տնկիներ (2022-2025թթ.) – 120 903,0 հազար դրամ,<br>բ. արոտավայրերի կայուն կառավարման գործառույթների իրականացման սարքեր (2022-2025թթ.) – 60 451,5 հազար դրամ<br>գ. համակարգչային տեխնիկա (2022թ.) - 11 034,4 հազար դրամ:<br>4) այլ ծախսեր (2022-2025թթ.)- 826,2 հազար դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր – 52 230,1 հազար դրամ՝<br>ա. Ծրագիրը իրականացնող աշխատողների վարձատրություն- 52 230,1 հազար դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, 2003 թվականի հունվարի 16–ի կառավարության N 66–Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական ոըակելու և գրանցելու կարգի 25–րդ կետով սահմանված կարգով լիազոր մարմնին և շրջակա միջավայրի նախարարությանը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ